«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2019 թվականի հունվարի ----ին

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում սահմանել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2. Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված լիազորությունների շրջանակներում և կարգով իրականացնում է հաշվեքննություն և/կամ ստուգում»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել 3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում հաշվեքննության և/կամ ստուգման կատարում»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես։